

15374

321

9-64

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՏԻՄԱՆ
ԳԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀՈԳԵԿԱՆ ԶՐՈՅՑ

ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

Ե. Ն. ՉԻՐԻԿՕՎԻ

Թարգմանություն ռուսերէնից

Գիշին է 15 Կ.

17.07.2013

15374

15 JAN 2010

26 SEP 2008

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱ-ԱՐ-
ԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

321

9-64

ս

ՀՈԳԵԿԱՆ ԶՐՈՅՑ

ՄԻԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ

1002
5743

Ե. Ն. Չ ի Ր ի Կ Օ Վ ի

Թարգմանութիւն ուսերէնից

ԹԻՖԼԻՍ

Էլեկտրասլ. Ն. Աղաճեանի, Պոլից 7.

1917



Քսան տարեկան հասակում Իվանը
գիւղը թողեց, գնաց զործարան ու էլ յետ
չեկաւ:

Վրայ հասաւ պատերազմը, հաւաքե-
ցին ջահելներին, մի քիչ բան սովորցրին
և ուղարկեցին Գերմանացու հետ կռւելու:

Իվանը խնդրեց, որ թոյլ տան իրան
գնալ իր հօրն ու մօրը և փոքրիկ եղբօրը
մնաք բարե ասելու, համ էլ ուզում էր իր
սիրականին տեսնելու: Չը թողին. ասացին,
որ չի կարելի: Միգրում Իվանը նամակներ
գրումէր, բայց յետոյ էլ նամակ չըստաց-
վեց նրանից: Նւ ոչ էլ մի լուր: Կարծես,
մարդն իսկի չէր էլ եղել աշխարհում: Չը
գիտէին ինչպէս աղօթք անեն նրա մասին,
առողջութիւն խնդրէին Աստծուց, թէ հո-
գու հանգստութիւն: Մեծերի մասին լրա-
գրներում գրումէին, թէ ճիւղ է վիճարկուել,
իսկ սովորների մասին լուր էին: Նւ
ինչպէս, ռոտեղ գրես. ճանճերի պէս էին

կոտորվում:

Եւ նրանց գինն էլ, երևի, մեծ բան չէ: Ուրեմն իսկի նրանց թիւը համարել էլ չեն ուզում: Բայց չեն հասկանում, որ Աստծու առաջ բոլորն էլ մարդիկ են, բոլորի գինն էլ միևնոյնն է, ծնողների սիրտն էլ միևնոյնն է ամենքի համար, ամեն մէկն էլ ցաւում է իր երեխայի համար:

Իվանի ծնողները սկսեցին հանդարտ լաց լինել և եկեղեցում պատարագի ժամանակ աղօթել այսպէս. «Տէր, դու ինքդ գիտես՝ նրա կեանքի համար պիտի աղօթել, թէ հոգու համար, Տէր, միայն քեզ է յայտնի:

Մէկն ասում էր, թէ Իվանին սպանել են, միւսը, թէ գերի է ընկել: Բան չէր հասկացվում: Երկու տարի անցած Իվանի հօրը, Նիկիֆօրին էլ քչեցին... լաց եղաւ խեղճ կնիկը իր փոքրիկի հետ, բայց ինչ կարող էր անել: Տարան ու տարան խեղճ միւրջաւորին: Հիմայ եկտեսնենք, ժամանակը գալիս, ով պիտի վար ու ցանքս անէ...

Մի տարի անցած-չանցած, Նիկիֆօրը յետ եկաւ առանց մի ոտի: Համեցէք, ստացիր քո անդամալոյծին:

— Հիմի ինչ պիտի անես առանց ոտի, —

ծվծվաց կնիկը:

Գիւղացին նրան մխիթարեց.

— Փառք Աստծու, որ կենդանի եմ վերադարձել: Ոտս զոհեցի թագաւորին և հայրենիքս:

Մխիթարում էր Նիկեֆօրն իր կնոջը այդ թագաւորով, իսկ ինքն իր մէջ մտածում էր.

— Լաւ, ոտս տուի թագաւորին, իսկ ինձ ինչ տւեց թագաւորը: Դեռ շնորհակալութիւն բարի մարդկանց, որ հիւանդանոցում ինձ պահեցին-պահպանեցին, ապա թէ ոչ՝ մուրացկանութիւն պիտի անէի, ողորմութիւն պիտի խնդրէի Յիսուս Քրիստոսի անուէնով:

Նոր տարին ուրախութիւն բերեց: Յանկարծ Իվանից նամակ եկաւ: Նամակ այն ժամանակ, երբ չէին սպասում և արդէն զադարել էին մինչև անգամ լաց լինել և նրա հոգու մասին էին աղօթում: Կարծես, նամակը միւս աշխարհից էր... հրաշք էր ուղղակի: Ուրախութիւնից լաց եղան խեղճ ծնողները:

Իվանը գրում էր, թէ ինչպէս երկար ժամանակ գերի է եղել, և ինչպէս փախել է, գնդակների տակ է ընկել, վերաւորվել է, թէ ինչպէս նրան վերցրել բե-

րել են Կիեվ, հիւանդանոց մտցրել: Գրում էր թէ հէնց որ առողջանայ, տուն պիտի վերադառնայ, թէ բժիշկն ասել է, որ աջ ձեռքը պիտի կտրեն...

— Մէկն առանց ձեռքի, միւսն առանց ոտքի, այ քեզ ցաւ, հիմայ ես ինչ անեմ անդամալոյծներիդ, լալիս էր կինը և, այնուամենայնիւ, ուրախանում, որ որդուն պիտի տեսնէ:

Նրան թւում էր, որ իր զաւակը մեռած էր ու յարութիւն է առել: Ինչ ուրախութիւն մօր համար մեռած որդուն կենդանի տեսնել:

Սպասում էին Բարիկենդանին, չեկաւ: Յանկարծ լուր տարածվեց, որ Ժողովուրդն ազատութիւն է ստացել, որ թագաւորին գահից զրկել են և բանդ նստեցրել... Ամբողջ գիւղը իրար անցաւ: Ժողովուրդն սկսեց յուզվել: Պրիստավին թակեցին և բանդ գցեցին, իսկ ուրեաղները կարողացաւ ձիով փախչել: Խօսք եղաւ, որ թագաւորն ու իր գերմանուհի կինը Ռուսաստանը ծախել են գերմանացիներին, որ նրանք երկիրը կողոպտելու են տուել զանազան ժուլիկ-միլիտարներին... մի խօսքով, շատ բաներ էին ասում և չըկար մէկը, որ օրի-

նաւոր պատմէր, թէ ինչ է կատարվում աշխարհի երեսին և ինչ պիտի լինի այսուհետև: Մի քանի յիմար կանայք լաց էին լինում, թէ ինչպէս պիտի ապրեն առանց թագաւորի: Ուրիշներն ասում էին.

— Ինչներին է հարկաւոր թագաւորը: Մինչև օրս նրա երեսն էլ չենք տեսել, ճանաչել ենք միայն նրա ծառաներին, դաւառապետներին, պրիստավներին, ուրեաղ-նիկներին: Իսկ զրանցից ինչ ենք տեսել: Ոչ մի լաւութիւն, բացի չարութիւնից ու կողոպուտից: Ամէն տեղ ժուլիկներ ու քիթ ու պոռնոյ շարդողներ են զրկած թագաւորի կողմից, ուրիշ ոչինչ:

Հարցրին գիւղական տէրտէրին, նա հօ խօսել անգամ վախեցաւ: Ոչ թագաւորի դէմ խօսեց և ոչ էլ նրա հակառակ եմիայն Աստծու օգնութեանը դիմեց: Իբրև թէ ամեն բան նրա ձեռքումն է: Երևում էր, որ վախենում էր ճշմարտութիւնն ասել:

Էլի գիւղացիները սկսեցին խօսել հողի մասին: Կը տան, թէ՛ չէ: Ազատութիւնն եկաւ, բայց հող չըկայ տակը: Ասողներ եղան, թէ պէտք է համբերել— հանրապետութիւնը հող կը տայ, իսկ թէ ինչ հանրապետութիւն է, ոչ ոք չը գիտէ օրինա-

ւոր ասել:

Մէկն ասումէ, որ հանրապետութիւն է ուսանողներ և գործադուլ, միւսը, թէ հանրապետութիւնը մի տէրութիւն է առանց թագաւորի, գիւղական համայնքի պէս մի բան, թէ բոլոր գործերը պիտի իրանք գիւղացիները կարգադրեն...

Մի քանիսն էլ ասացին, թէ հանրապետութեան ժամանակ էլ թագաւոր լինելու է, միայն ընտրված, ժամանակաւոր թագաւոր:

— Դէ հիմի ի՞նչ անենք մենք, ի՞նչ պէս և ո՞ւր կողմն անցնենք, — հարցնում էին ծեր մարդիկ, իսկ կանայք վախեցնում էին: Ասում էին, թէ ուրեաղնիկներն էլի կը գան իրանց մտրակներով ու ձեզ բոլոր յիմարներիդ բանտ կը քշեն: Ձէք յիշում, թէ ինչեր եղան ճապոնացիները հետ կովկասյան յետոյ, երբ էլի ազատութիւն տուեցին ձեզ:

Մէկն ուրախ էր, միւսը վախենում էր, ոչ ոքի խելքը բան չէր կտրում: Ձեռք ընկած լրագիրներն էլ հէնց մի գլուխ հանրապետութեան մասին էին գրում: Հանրապետութիւն, հա հանրապետութիւն:

Չարչարանքի շաբաթ, ուղիղ թաթախ-

ման օրը Իվանը եկաւ: Մի ձեռքը չը կար, չուխայի թեր քաշ էր ընկած դատարկ, իսկ կրծքին կպցրած էր մի կարմիր ժապաւէն: Այ ուրախութիւն:

Գիւղի ամէն կողմերից եկան հաւաքվեցին: Կարծես թէ հրդեհ էր:

Սեղանը բաց արին, սամովարը դրեցին, սոռճին տեղը նստեցին անոտքն ու անձեռքը, իսկ փոքրիկ Միտկան սկսեց ուրախ-ուրախ պտտել մեծ եղբօր մօտ: Մայրն և արտասուքն էր սրբում և՛ ծիծաղում էր, և չը գիտէր ինչով շահել իր մարդու սիրտը: Խրճիթում ասեղ զցելու տեղ չըկար, ծեր, պառաւ, տղայ, աղջիկ, ամենքն էկել էին: Կարծես, հարսանիք լինէր: Մինչև անգամ լուսամուտներով գլուխները ցցել էին ներս փողոցից:

Իսկ հայրը կատակներ էր անում ջահել աղջիկների հետ:

— Էյ, աղջկերք, ինչ անենք որ մեր Վանիայի մի ձեռքը կտրած է, մի ուրիշն երեք ձեռքովն էլ չի կարող նրան յաղթել: Պսակելու ենք — մտիկ արէք, տեսէք որ մէկիդ է աւելի դուր գալիս:

Թէյ խմեցին, կատակներ արին, ծածաղեցին, յետոյ սկսեցին զրոյցներ անել: Ծերերն ու կանայք սկսեցին հարց ու փորձ

անել թագաւորի, հողի ու հանրապետութեան մասին: Ինչ որ լինի էլի Իվանը աշխարհ տեսած մարդ էր, Մոսկւայումն էլ եղել է, պատերազմումն էլ, ամեն բան կարող է հասկանալ, հօ մեզ նման անուսում ուսմիկ չէ:

— Հիմի առանց թագաւորի ի՞նչ պիտի անենք, — հարցնում էին կանայք Իվանին:

Իսկ Իվանը.

— Էլ ինչնե՞րիդ է հարկաւոր թագաւորս: Ի՞նչ օգուտ ունիք նրանից:

— Բա, ինչպէս թէ... առանց թագաւորի ֆէյդ կը լինի, — կրկնում էին կանայք և էլի մի խելօք բան ասել չէին կարողանում:

Իսկ Իվանը.

— Ինչպէս ճորտութեան ժամանակ կալուածատէրն էր, այնպէս էլ թագաւորն էր ձեզ համար: Ոչ մի բան նա չի արել ժողովրդի համար, այլ միայն թղթեր ու զանազան սուտ մանեֆիստներ է ստորագրել, իսկ բոլոր գործերը կառավարել են միւսիստր-կալուածատէրները իրանց օգտի համար, ժողովրդին կողոպտել են և մեր մայր Ռուսաստանը ծախել են նեմեցներին: Իսկ թէ ժողովուրդը ինչքան փող է տուել թագաւորին, նրա ընտանիքին ու զանազան

բազմաթիւ իշխանների ու իշխանուհիների, հաշուել անգամ չի կարելի: Եւ ա՛մեն մէկի մօտ եղել են աման լզողներ, որոնք աշխատել են իրանց զբաղանքը լցնել, իսկ ժողովուրդը նրանց համար եղել է ոչխարների հօտ: Խուզել են ու խուզել, ուրիշ ոչինչ: Եւ երբ ժողովուրդը ոտքի է կանգնել, զինւորին, այսինքն հէնց մեր գիւղացուն հրամայել են կոտորել ժողովրդին:

— Թագաւորն Աստծու Օծեալն է, նրա համար եկեղեցիներում աղօթում էին, — ծվծվաց մի կին:

Իսկ Վանիան.

— Տէրտէրները — թագաւորի աղօթարարներն են: Թագաւորի ժամանակ նրանք Քրիստոսին չէին ծառայում, այլ միայն թագաւորին, մինիստրներին, ժանդարմներին, հարուստներին ու զօրեղներին: Ում հրամայում էր թագաւորը նրան էլ օծում էին, ում համար հրամայում էր աղօթել, նրա համար էլ աղօթում էին: Թագաւորի ժամանակ էլ տէրտէրներն էլ ուրեաղնիկների ու ժանդարմների պէս մի բան էին: Իսկ Լեվ Տօլստօյին ճանաչում էք: Նրա նման մարդիկ շատ քիչ կան աշխարհի երեսին: Ամենախելօք և ամենաարդար մարդն

ու գրողն էր: Քրիստոսի անունով էր գործում, թագաւորների ու մարդկանց վատ արարքներն էր լոյս աշխարհ դուրս բերում, իր հողերն էլ տուել էր գիւղացիներին: Եւ ինչ արին նրան քո տէրութենքը թագաւորի հրամանով. գլխին անաթէմա կարդացին ու երբ մեռաւ, հրաժարվեցին հոգեհանգիստ կատարել նրա համար: Ահա ձեզ Քրիստոսի ծառաներ... Այդ տեսակ թագաւորներին երեսին մուր պիտի քսել, ոչ թէ մեռոն: Խաբեբայութիւն ու խաբեբայութիւն ուրիշ ոչինչ: Ժողովրդին խաւարի մէջ են պահում, որ հնազանդ մնայ և դեռ իր բռնակալների մասին էլ Աստծուն աղօթէ:

— Ուրեմն առանց թագաւորի էլ կարելի է ապրել:

— Իհարկէ, հէնց ամենալաւն էլ այդ է: Ախար որ թագաւոր լինի, էլի միկնոյնը կը լինի: Միթէ մի հատիկ մարդ կարող է Ռուսաստանի պէս մի ահագին երկիր կառավարել: Մէկէլ ահա թէ ինչ: Թագաւորները ընտրովի չեն, այլ թագաւորական իշխանութիւնը հօրից անցնումէ որդուն, եթէ որդի չըկայ, անցնումէ եղբօրը: Իսկ եթէ որդին յիմար է և խղճատանք չունէ, այն ժամանակ: Համբերիր, միկնոյնն է, թա-

գաւոր է, հնազանդվիր քո գլխին նշանակված յիմար և ժուլիկ իշխանաւորներին և դեռ յիմարների ու ժուլիկների մասին էլ աղօթք արա Աստծուն: Այթէ բանն ինչումն է: Ձէ, ժողովուրդը թագաւորներից օգուտ չունէ: Թագաւորը միշտ հարուստներին է պաշտպանելու, որովհետեւ ինքը Ռուսաստանում ամենահարուստ մարդն է ու առաջին կալուածատէրը: Հարուստը հարստի եղբայրն է, եւ ոչ մի բանից էլ թագաւորը չի վախենում: Ինչ որ ուզենայ կանէ, իսկ միշտ այն կուզենայ անել, ինչ որ նրա ականջին կը փսփսան հարուստները ու մէկէլ ճարպիկ միջոցները: Այդպէս էլ եղաւ Նիկօլայ երկրորդի ժամանակ: Իբրեւելքը պակաս էր, շուրջը հաւաքվել էին կամ գերմանացիներ կամ դաւաճաններ ու ժուլիկներ: Պետական Դոմայի ասածներին ականջ չէր դնում, ուզած ժամանակ արձակումէր, ականջ էր դնում իր կնոջը թագուհուն, որ խորամանկ գերմանուհի է, դաւաճան-միջոցներ Սուխօմլինովին ու մէկէլ Գրիշկա Ռասպուտինին, այդ անառակին, որի միջոցով գերմանացիները Ռուսաստանը փողով առնումէին:

Ծերունի Նիկիֆօրն էր միայն, որ լը-

սուսէր այդ խօսքերը: Նա հարցրեց.

— Ուրեմն, ժողովուրդը ինքը կարող է իր համար լաւ թագաւոր ընտրել և երբ լաւ դուրս չեկաւ, կարող է մի ուրիշին ընտրել: Վանիան բացատրեց.

— Հէնց հանրապետութիւնն էլ այդ է, միայն թէ ընտրվածը թագաւոր չի կոչվում, այլ հանրապետութեան նախագահ: Իմ ասածն էլ դա է էլի: Երբ որ թագաւոր կայ, ուրեմն միապետութիւն է, իսկ երբ որ թագաւորի տեղ ընտրովի կառավարիչ է, ժամանակաւոր, այն ժամանակ նախագահ է, հանրապետութիւն: Նախագահը լաւն է, նրան կարելի է նորից ընտրել: Հարկաւոր է միայն, որ երաշխաւորութիւն լինի: Մենք պէտք է հանրապետութիւն պահանջենք, ապա, թէ ոչ էլի առաջուայ պէս կը մնայ մեր դրութիւնը:

— Իսկ ո՞վ է այդ բանը վճռելու, — հարցրեց ծերունին մեն մենակ:

— Վճռելու է «ՀիՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՐ»:
Նա պիտի ասէ, թէ ամբողջ ժողովուրդն ինչ է ուզում, միապետութիւն, թէ հանրապետութիւն: ՀիՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՐ համայնական ժողովի պէս մի բան է ամբողջ ժողովրդի մասնակցութեամբ:

— Միթէ կարելի՞ է ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը քշել բերել մի տեղ, — հարցրեց ծերունին:

Վանիան բացատրեց այսպէս.

— Ամենքին չի հարկաւոր քշել: Ամեն մէկը ձայն կը տայ իր տեղում, իսկ ՀիՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՐ կուղարկվին ընտրված հաւատարիմ մարդիկ: Ամեն մի քաղաքացի, ռամիկ թէ աղա, կին թէ տղամարդ պիտի տայ իր ձայնը բացի երեսաներից ու գժերից, թէ ով ում է ուզում ընտրել: Ով ամենից աւելի ձայն կստանայ, նա էլ կը զնայ ՀիՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎՐ գործը վճռելու: Իսկ ընտրվածն այնտեղ պարտաւոր է ասել այն, ինչ որ նրան հրամայել են ընտրողները, այսինքն է գաւառը միապետութիւն է ուզում, թէ հանրապետութիւն: Եթէ ամբողջ ժողովուրդը մինչև վերջին աղքատը ուղարկէ իր ընտրածներին, կը նշանակէ ամբողջ ժողովուրդն էլ ինքն իրան պիտի կառավարէ, ինքն իր գլխի տէրը պիտի լինի: Այն ժամանակ այդ կը լինի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ կամ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ: Մի ուրիշ տեսակի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻԱՆ էլ կայ, մեծամեծները հանրապետութիւն, որին ամբողջ ժողովուրդը

չի ընտրուում, այլ նրանք, որոնք հարուստ են, այսինքն, ինչպէս ասում են ցենզ ունեցողները: Ընտրութիւններն էլ տեսակ-տեսակ են: Կարելի է ընտրվածներին ուղիղ ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ չուղարկել, այլ այնպէս անել, ինչպէս Պետական Դումայի ժամանակ: Այս դէպքում ամենքը չեն մասնակցում ընտրութիւններին և այն էլ ոչ ուղղակի, այլ առաջ ընտրուում են մէկին, յետոյ այդ ընտրվածներն ընտրում են ուրիշներին: Երբ այդպէս լինի, դա ժողովուրդի համար ձեռնտու չէ, որովհետեւ էլի մէջ կընգնեն տէրաւորները, վաճառականներն ու աղաները, որ իրենց շահերը կը պաշտպանեն, իսկ հասարակ ժողովուրդը, բանւորները, սալդաթները ու գիւղացիները կը մնան դուրս:

—Ուրեմն մեզ համար ձեռնտու է ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ համար ձայն տալ, չէ՞, —հարցրին գիւղացիները:

—Անպատճառ, —պատասխանեց վաշիան: Ռամկավարական հանրապետութիւն, պրծաւ գնաց: Մէկէլ ահա թէ ինչ: Խօսքըս ընտրութիւնների մասին է, երբ ամբողջ ժողովուրդն է ընտրում, այդ նշանակումէ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ընտրութիւն: Ամեն մէկն ուղղակի ինքն է ընտրում պատգամաւոր ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎի համար և ոչ թէ ընտրողներ է ընտրում, ուրեմն ընտրութիւնը ՈՒՂՂԱԿԻ է: Դա ամենաճշմարիտ ընտրութիւնն է, որովհետեւ ձայնդ ուրիշի չես տալիս, այլ ինքդ ընտրում: Եւ ամեն մի ձայն հաւասար է, միևնոյն կշիռն ունէ և ամբողջ ժողովուրդը հաւասար թւով պատգամաւորներ է ուղարկում, օրինակի համար՝ ամեն մի հազար հոգի մի պատգամաւոր է ուղարկում ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ, ինչ որ լինի՝ այդ հազար հոգին, ազնուական թէ գիւղացի, հարուստ թէ աղքատ, կին, թէ տղամարդ: Դրա համար այդ տեսակ ընտրութիւնը կոչվումէ ՀԱԻՍՍԱՐ: Եւ որպէսզի ընտրողը չը նեղվի իր չուզածին ձայն չը տալու և ուզածին ձայն տալու, պէտք է այնպէս անել, որ ոչ ոք չիմանայ, թէ ով ում է տուել իր ձայնը: Թող այդ, բացի քեզնից, ամենքի համար գաղտնիք մնայ: Դրա համար էլ այդտեսակ ընտրութիւնը կոչւումէ ԳԱՂՏՆԻ: Այդ ժամանակ ոչ ոք ոչ ոքից չի նեղանալ և ոչ ոք էլ ոչ ոքից չի քաշվիլ:

—Հասկացա՞ք, եղբայրներ:

— Հասկացանք, հասկացանք, ինչ կայ
չը հասկանալու:

— Ուրեմն չէք մոռանալ: Պէտք է պա-
հանջել ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ,
ՈՒՂՂԱԿԻ, ՀԱԻԱՍՏԱՐ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՁԱՅ-
ՆԱՏԻՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ և ձեր ընտ-
րեալներին ստիպել որ այնտեղ ժՈՂՈ-
ՎՈՒՄ պահանջեն ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ:

Եւ ամենքը խրճիթում ու դրսից միա-
ձայն գոչեցին.

— Հանրապետութիւն, հանրապետու-
թիւն: Թագաւոր չենք ուզում:

ԿԵՅՅԷ ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹԻՒՆԸ.

Եւզենիյ Չիրիկով

ՀՀ Ազգային գրադարան



NL0189404

